



# ՃՐԱԳ

Սկաուտական թերթիկ



## Հրատարակութեամբ

Հ.Մ.Ը.Մ. (Ալմելո) -ի Մեկուսի մասնաճիւղի Սկաուտութեան Գրական յանձնախումբ:

### Պարունակութիւն

- Մեր խօսքը:
- Տէրունական Աղօթք:
- Հ.Մ.Ը.Մ.-ի ընդհանուր ծրագիր եւ կանոնագիր:
- Ինչ է Ռազմավարական Ծրագիրը:
- Ո՞վ է գայիկը:
- Ինչու՞ Եղբայր կամ Քոյր:
- Հ.Մ.Ը.Մ Ալմելո-ի գործունէութիւնը՝ 2012:
- Վա՛յ վա՛յ կղզի-են լուրեր:
- Հողուածներ:

### Մեր խօսքը

1 Դեկտեմբեր 2012-ին Հ.Մ.Ը.Մ. Ալմելո-ի Մեկուսի Մասնաճիւղի Վարչութեան գումարած ժողովի որոշումով, միութեանս հովանաւորութիւնը ստացուեցաւ հրատարակելու (ՃՐԱԳ) թերթիկը, միութեանս Սկաուտական գրական յանձնախումբի աշխատանքներով, ի նպատակ ունենալով, ծանոթացնելու Հ.Մ.Ը.Մ-ի եւ միութեանս աշխատանքները Հոլանդա համայնքին եւ բոլոր իւրաքանչիւր հետաքրքրողներուն:

Ընդհանրապէս Հ.Մ.Ը.Մ-ի եւ մասնաւորապէս (Ալմելո) մեկուսի մասնաճիւղի աշխատանքները թերեւս որոշ չափով անձանօթ են, այս կամ այն պատճառներով մաս մը մեր հայրենակիցներուն:

Մեր յանձնախումբի անդամները ոչ թղթակիցներ, ոչ ալ հայ գրականութեան գրագետներ են, բայց բոլոր հնարաւոր ճիգեր եւ կարողութիւններ պիտի տրամադրեն ծանոթացնելու Հ.Մ.Ը.Մ-ը մեր

ընթերցողներուն:

Ճրագ-ին հիմնական նիւթերն պիտի ծանրաբերուին (Հ.Մ.Ը.Մ-ի 2012 հրատարակուած Ռազմավարական Ծրագրի, Հ.Մ.Ը.Մ-ի Ծրագրի, Սկաուտական գիտելիքներուն , ընդհանուր եւ ներքին լուրերուն, պատմական, ժողովուրդական, ազգային եւ զանազան լուրերու) ծանոթացման, բացատրութեան եւ վերլուծումի. Թերթիկին հրատարակութիւնը ներկայիս տեղի պիտի ունենայ երկու լեզուներով (Հայերէն եւ Հոլանդերէն):

Ըստ Հ.Մ.Ը.Մ-ական եւ Սկաուտական սովորութիւններուն , որեւէ աշխատանք սկսելէ առաջ (Տէրունական Աղօթք)ը իր յառաջադէմ ներկայութիւնը օրհնած է, եւս մենք ալ մեր առաջին հրատարակութիւնը պիտի ըլլայ (Հայը Մեր)ով:

### Հանդիպիլ

#### Adres Homenetmen Almelo

Dahliastraat 9A 7601 AW Almelo, Nederland

#### Email

info@homenetmenholland.nl

#### Website

www.homenetmenholland.nl

#### Facebook

Homenetmen Almelo



## Տէրունական Աղօթք



Հայր մեր որ յերկինս ես, սուրբ եղիցի անուն քո:  
 Եկեցէ արքայութիւն քո: Եղիցին կամք քո: Որպէս  
 յերկինս եւ յերկիր: Ջիւղ մեր հանապազորդ, տո՛ւր  
 մեզ այսօր, եւ թո՛ղ մեզ զպարտիս մեր, որպէս եւ մեր  
 թողումք մերոց պարտապանաց: Եւ մ՛ի տանիր զմեզ  
 ի փորձութիւն, այլ փրկեա՛ զմեզ ի չարէն: Ջի քո է  
 արքայութիւն եւ զօրութիւն եւ փառք յաւիտեանս:  
 Ամէն:

*«Թէ այսօր ձեզ Փրկիչ ծնունեցալ Դաւիթի Քաղաքումը որ  
 է Քրիստոս Տէր»*

*Ղուկաս 2-11*



### Սիրելիներ

Յաջողութեան լաւագոյն  
 մաղթանքներով Հ.Մ.Ը.Մ Ալմելօի  
 մեկուսի վարչութիւնը ջերմօրէն  
 կ'ընդհանրէ ձեր Նոր  
 Տարին եւ Ս. Ծնունդը



## Հ.Մ.Ը.Մ.-ի ընդհանուր ծրագիր եւ կանոնագիր

### Անուն

Միութիւնս կը կոչուի Հայ Մարմնակրթական Ընդհանուր Միութիւն (Հ.Մ.Ը.Մ. եւ սկաուտներ).

### Նպատակ

Հ.Մ.Ը.Մ-ի նպատակն է .-

- Ա)** Պատրաստել Ֆիզիքապէս տոկուն, իմացական եւ հոգեկան բարձր արժանիքի տէր հայեր եւ տիպար քաղաքացիներ,
- Բ)** Սորվեցնել միութեան անդամներուն ըլլալ չարքաշ եւ արի, ազգասէր ու հայրենասէր, օրինապահ եւ կարգապահ,
- Գ)** Զարգացնել անոնց մօտ պարտականութեան գիտակցութիւն, պատասխանատւութեան եւ պատուի զգացում, համաերաշխութեան եւ փոխադարձ օգնութեան ոգի,
- Դ)** Համակել անառնց միտքն ու սիրտը մարզական ազնւագոյն ոգիով

## Ինչ է Ռազմավարական Ծրագիրը՞

2007-ի Հ.Մ.Ը.Մ-ի Պատգամաւորական 9րդ ժողովի որոշումով, սկիզբ առնուեցաւ ուսումնասիրութիւն մը պատրաստել Հ.Մ.Ը.Մ-ի առաքելութեան , հիմնական արժէքներուն եւ Հ.Մ.Ը.Մ-ի ապագայ տեսականին ու գործելու ուղղութեան: Ծրագիրը 3 տարուան աշխատանքի արդիւնք է միութեանական անդամներու աջակցութեան, ներդրումին, խորհուրդներուն եւ լրացումներուն աւելի քան 400 գործօն Հ.Մ.Ը.Մ.ականներու, Հ.Մ.Ը.Մ.ով շահագրգռուածներու եւ համայնքային առաջնորդներու:

Ծրագիրը պատրաստուած է ութ անդամ յանձնախումբի կողմէ, այս Ծրագիրը քննարկուեցաւ եւ վաւերացուաւ

Հ.Մ.Ը.Մ-ի Պատգամաւորական 10րդ Ընդհանուր Ժողովի ընթացքին (Հայաստանի մէջ):

Ծրագիրը պիտի ըլլայ անկիւնաքար մը մեր միութեան երկրորդ դարաշրջանին համար. Ռազմավարական Ծրագիրը կ'անդրադառնայ 11 Ռազմաւարական հարցերու եւ կ'պարունակէ 81 նպատակներ ու 99 Առաջադրանքներ:

Հարցերը կը ներկայացնեն ընդհանրական մտահոգութիւններու յատուկ մարզեր: Նպատակները կ'հաստատեն այն ուղղութիւնը, որուն վրայ Հ.Մ.Ը.Մ.ը կ'ուզէ եւ կարիք կ'զգայ կեդրոնանալու, որպէսզի բարելաւէ իր ընդհանուր գործունէունը:

## Ո՞վ է գայլիկը՞

Գայլիկը այն սկաուտն է, որուն տարիքը կը տարբերի 6էն 11 տարեկանի միջեւ, ան միշտ կ'օգնէ ուրիշին եւ վստահելի է: Ան կը հագնի գայլիկական յատուկ տարագ եւ ամէն շաբաթ ներկայ կը գտնուի հաւաքոյթներուն, ուր կը սորվի ըսկաուտական, ազգային, կրօնական, բնութեան եւ մարզական գիտելիքներ:

Աղբիւր՝ Կակուղ Թաթիկ



## Ինչու՞ Եղբայր կամ Քոյր՞

Հ.Մ.Ը.Մ.ի հիմնադրման օրէն ի Վեր Միութիւնս մեծ ուշաթրութիւն էր հատկացուած որբահաւաք աշխատանքներու եւ օգնութիւն ցուցաբերելու Ցեղասպանութեան եղած հայ գաղթականներուն եւ մասնաւորապէս Որբահայերուն:

Մեծ Եղեռնիէն ետք Օսմանական կայսրութեան տարածքէն ներս շատ մի հայկական եւ այլ օտարական կազմակերպութիւններու կողմէ ստեղծուեցաւ բազմաթիւ որբանոցներ, եւ շնորհիվ այս կազմակերպութիւններուն ցեղասպանութիւնէ վերապրող հայ մանուկները, ապահով հանգրուան գտան:

Որբանոցներու առողջական եւ այլ կենցաղային խնդիրներէն զատ մեծ կարեւորութիւն էր յատկացնել մասնագիտական կարողութիւններ ու մրցական ոգին ներդրմանը ուր բացառութիւն չէին կազմել նաեւ Սպորտը եւ Մարմնամարզութիւնը:

Գավառներէն, Կ.Պոլսո գաղթած հայ որբերը տեղաւորուեցան մայրաքաղաքի որբանոցներուն մէջ: Ստեղծուեցաւ Պեյլերպէի, Ետիկուլի, Խասգիլի, Առնավուտ գիլի, Գարակիլգեան, Արմեան, Պեգա-գեան եւ Միսիթարեան որբանոցներ:

Որբախնամ աշխատանքը իրականացուեցաւ հայկական սկաուտական խումբերու ու մարմնամարզական ակումբներու կողմէ կազմակերպուեցաւ նաեւ հանգանակութիւններ: Այսպէսով Հ.Մ.Ը.Մ.ը զբաղեցաւ շուրջ 15,000 որբերու սկաուտական ու մարզական դաստիարակութեան գործին: Որոշ որբանոցներ շաբաթ օրերուն կը կազմակերպէին սկաուտական արշաւներ ու մրցումներ.

Այս բոլոր վերհիշեալ որբահայ մանուկներու բնորոշուման եւ ճակատագրին, ստեղծուեցաւ մի նոր ընտանեկան մտնուլորտ, նոր ընտանիք որուն անունը է (Հ.Մ.Ը.Մ) ուր բոլորն ալ Քոյրեր եւ Եղբայրներ էին:



## Հ.Մ.Ը.Մ Ալմելո-ի Մեկուսի Մասնաճիղի գործունէութիւնը` 2012

- **6 Յունուար:** Շքեղ պարահանդես, Ս. Ծնունդի առիթով:
- **16 Փետրուար:** Թեյասեղան (Ս. Գրիգոր Լուսաւորիչ Եկեղեցոյ սրահին մէջ), Վարդանանց տօնի առիթով:
- **3-4 Մարտ:** Տեղի ունեցավ (Ս. Գրիգոր Լուսաւորիչ Եկեղեցոյ սրահին մէջ), Սկաուտական բանակում: 4 Մարտին հիւրասիրուեցաւ տաք ճաշով (պատրաստութեամբ Սկաուտական խմբապետներէն):
- **11 Մարտ:** Տեղի ունեցաւ Տարեկան ընդհանուր ժողով:
- **8 Ապրիլ:** Ս.Զատկուայ առիթով, շքեղ պարահանդես:
- **30 Ապրիլ-4 Մայիս:** Սկաուտական խմբական բանակում:
- **26 Մայիս:** Սկաուտական մասնակցութիւնը ներկայ էր (Հայ Տուն-ի, կազմակերպուած ) Գարնիկ սարգիսեան համերգին բացման արարողութեան:
- **9 Մեպտեմբեր:** Յաւելեալ Ընդհանուր ժողով:
- **16 Մեպտեմբեր:** Թեյասեղան Ս. Խաչի տօնի առիթով:
- **3 Նոյեմբեր:** Սկաուտական (Խմբապետական) բանակում:
- **17 Նոյեմբեր:** Տարեկան (Մարզական եւ Սկաուտական) մարզահանդես:
- **31 Դեկտեմբեր:** Գործակցութեամբ Հայ Տուն-ի հետ, Նոր Տարուայ շքեղ պարահանդես:

Եւ այլ հաւաքական (Տազ Ճաշի, Պինկօի եւ Պտոյտի)  
խրախճանքներ:

## Վա՛յ վա՛յ կղզի-են լուրեր Պապելոնի Աշտարակ

Մեր գիտնականներուն եւ Պատմապաններուն վերջին ժողովին արդիւնքն է, թէ Պապելոնեան աշտարակի կառոյցված չէ Պապելոնեան աշխարհի մէջ այլ մեր փոքրիկ կղզիին վրայ: Հիմնուելով որոշ ասպարեզներուն (Մարզական, Գիտական, փիլիսոփայական... եւ այլն) մէջ, շատ մի անհատական հոչակաւոր հայրենակիցներ ունինք , բայց մեր հաւաքական (ըլլայ Միութիւններն, Կուսակցութիւններն, Ակումբներն... եւ այլն) պատմական նոր կամ հին հարուստութեան կողքին, տակաւին շօշափելի եւ ծարավ մէկ ազգային աշխատանքի հնարաւորութիւն ունինք:





**Հոդուածներ:**  
**Տորթ. Շահէ Ենիգոմշեան**  
**(Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Ռազմավարական**  
**Ծրագիրի Գործադիր Ցանձնախումբին կողմէ)**  
**Ռազմավարական Ծրագիրի մասին**

**Ներքին մարտահրավերներ**

Ներքին ճակատի վրայ, Հ.Մ.Ը.Մ. նախ պէտք է վերակազմակերպէ ինքզինք՝ դառնալու համար արդիւնաւէտ, ժամանակակից եւ աւելի գրաւիչ կազմակերպութիւն մը: Ան պէտք է շեշտէ նաեւ իր առաքելութեան հիմնական սկզբունքները: Այս երկուքը պէտք է միասին կատարուին: Ասիկա կը նշանակէ, որ Հ.Մ.Ը.Մ. պարտի գրաւել այսօրուան երիտասարդութեան ուշադրութիւնը՝ անոր մատուցելով հաճելի միջավայր, միաժամանակ հսկելով, որ երիտասարդներ դառնան հայ ազգին ծառայելու պատրաստ, պատասխանատու անձեր:

Այս կը նշանակէ նաեւ, որ Հ.Մ.Ը.Մ. պիտի ողջունէ եւ քաջալերէ իր շարքերուն մէջ եղող եւ բոլոր ենթամշակոյթերու պատկանող հայերը, յատկապէս պատանի-երիտասարդներու այն խաւը, որ այսօր դժուարութիւն ունի հայերէնով սահուն կերպով արտայայտուելու: Առաւել, ան պիտի քաջալերէ այն բոլոր հայ պատանիները եւ երիտասարդները, որոնք հայերէնով դիւրին կը հաղորդակցին եւ մաս կը կազմեն մեր ընտանիքին: Հ.Մ.Ը.Մ. հաւասարապէս պիտի մօտենայ անոնց, որոնք սահմանափակ կարողութիւն ունին հայերէնով արտայայտուելու, եւ պիտի փորձէ իրենց նոյնանման առիթ եւ դաստիարակութիւն տալ:

**Եզրակացութիւն**

Ի՞նչ է, որ պատմականօրէն մեր միութիւնը ծառայած է այն պատանիներուն ու երիտասարդներուն, որոնք սահուն հայերէն կը խօսին, բայց այժմ ժամանակն է արդէն մեր թիրախը դարձնելու հայերէն խօսող կամ չխօսող բոլոր երիտասարդներն ու պատանիները, առանց որեւէ սահմանափակման: Պատանիներն ու երիտասարդները իրենց հայկական ինքնութեան հետ կամրջելով ու անոնց ընձեռելով դիւրութիւններ, որ ծանօթ ու առնչակից ըլլան հայկական խնդիրներու հետ, պէտք է ըլլայ մեր կարեւորագոյն կամ, աւելի ճիշդը, ամենէն կարեւոր ազգային հեռանկարն ու նպատակը:

Երիտասարդութիւնն է, որ շատ մօտիկ ապագային Հայաստանի Հանրապետութեան աջակցութեան խարիսխը պիտի հանդիսանայ: Երիտասարդութիւնն է նաեւ, որ պիտի ստանձնէ Մփիւռքի ղեկավարման ղեկը: Ազգային ոչ մէկ նպատակ կարելի է հետապնդել առանց հայրենասէր, աշխոյժ, գործունէայ եւ կրթուած են, հպարտ են իրենց հայկական ինքնութեամբ եւ ունակ են իրենց գոյգ՝ հայկական եւ ոչ-հայկական ինքնութիւններուն միջեւ գոյութիւն ունեցող հակասութիւնները կարգաւորելու՝ այդ տուեալը առաւելութեան վերածելով:

Եթէ ասիկա ազգային պատշաճ նպատակ եւ հեռանկար չէ, ուրեմն ի՞նչ է: Հ.Մ.Ը.Մ. Կը ծառայէ աշխարհասփիւռ հայ երիտասարդութեան պատկառելի զանգուածի մը եւ առիթը ունի ծառայելու մինչեւ այսօր հայկական իրականութենէ հեռու մնացած երիտասարդներու յաւելեալ փաղանգի մը: Ռազմավարական իր ծրագիրով Հ.Մ.Ը.Մ. պիտի փորձէ իրականացել ճիշդ ա՛յդ նպատակը:

**Առաջարկներու համար կը խնդրուի կապ հաստատել [homenetmen.djrak@gmail.com](mailto:homenetmen.djrak@gmail.com) հետ:**